



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒՂՊԵՆԿՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻԾԷԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱՂ ՀԱՄԱՅՆ
ՀԱՒԱՏԱՑԵԱՂ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ, ՈՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Նախախնամողն Աստուած, մեր ազգին յաճախ պարգևած է բազում
շնորհներով օժտուած զաւակներ, որոնք պարծանքը հանդիսացած են հայոց
պատմութեան:

Մեր ժողովուրդի այդպիսի զաւակներէն մին եղաւ Գալուստ Սարգիսի
Կիլիպէնկեան, որու ծննդեան հարիւրամեակը կը լրանայ այս տարի:

Գալուստ Կիլիպէնկեան, միջազգային տնտեսական կեանքի մէջ հռչակ-
ուած անուն մը դարձաւ, տակաւին իր երիտասարդութեան տարիներէն, իբրեւ
փայլուն իմացականութիւն եւ տաղանդաւոր գործարար անձնատրութիւն:

Շուայլօրէն պայծառ իր միտքը, իր բարոյական ամուր ակարագիրը եւ աշ-
խատանքի ստեղծարար կիրքը՝ առաջնորդեցին զինք յաջողութենէ յաջողու-
թիւն, որով իր կեանքի վերջալոյսին, ան հանդիսացաւ իր ժամանակաշրջանի
մեծագոյն դէմքերէն մին, տնտեսական միջազգային բեմին վրայ:

Գալուստ Կիլլալեանի կեանքի ընթացքին, յաճախ երկարեց իր բարիք բաշխող ձեռքը, մեր ժողովուրդի կարիքներուն եւ շրջան մըն ալ արդիւնաւոր գործունէութիւն ունեցաւ հայ սփիւռքի մէջ, իբրեւ նախագահ Հայ բարեգործական ընդհանուր միութեան:

Սակայն մեծ կեանքացիի հոգւոյ վսեմութիւնը ամբողջապէս ճշմարտութեամբ իր պատմական կտակով, երբ հրաժեշտ կուտար այս անցաւոր կեանքին: Գալուստ Կիլլալեան, իր կտակով գիտցաւ բարոյական անկորնչելի արժէք տալ իր հիւթական հարստութեան: Այսպէս է որ ծնունդ առաւ բարեսիրական մեծ հիմնարկութիւնը Լիւքսեմբուրգի մէջ, որուն արժանաւոր եւ բարեջան ղեկավարները կը հանդիսանան այսօր՝ մեծարգոյ տիրաբէժ՝ դոկտ. Ժոզէ Բերտիկան՝ նախագահ, Գեորգ Եսայեան, Ռոբերտ Կիլլալեան, իրենց յարգարժան գործակիցներուն հետ միատեղ:

Այսօր, Գալուստ Կիլլալեանի հիմնարկութիւնը յայտնի է աշխարհին, իր բարի եւ շինարար բազում գործերով: Երկիրներ, ժողովուրդներ ամբողջ եւ բազմաթիւ կրօնական, կրթական, գիտական եւ մշակութային հաստատութիւններ, երախտապարտ են մեծ հայուն եւ անոր անունը կրող հիմնարկութեան:

Երախտապարտ է նաեւ մեր եկեղեցին եւ մեր ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Վերջին տաւը տարիներու ընթացքին գրեթէ չկայ ազգաշէն կարեւոր ձեռնարկ մը որուն կենսագործման իր նպաստը բերած է ըլլայ Գալուստ Կիլլալեանի հիմնարկութիւնը:


Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը, մեր օրերու իր վերաշինութիւնը կը պարտի նոյն մեծ բարերարին, որ իր կտակին մէջ մասնաւոր հոգածութեամբ յիշատակած էր զայն, որպէս հարազատ որդին Մայր Աթոռին:

Հայ ժողովուրդը իրաւամբ միախառնած է եւ հպարտ՝ իր բազմադարեւոր դարձող Գալուստ Կիլլալեանի կեանքի եւ մեծագործութեամբ, եւ այսօր երախտագէտ սրտով կը խոնարհի անոր պայծառ յիշատակին առաջ:

Յաւիտենական լոյս եւ խաղաղութիւն իր մարդասէր հոգիին:

Այսու Մեր կոնդակով կ'առաջադրենք՝ որ մեր բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան հանդիսաւոր արարողութիւններ կատարուին յառաջիկայ դեկտեմբեր ամսուան ընթացքին, կենդանի խօսքով եւ հրատարակութիւններով պանծացնելով մեծ բարերարի յիշատակը:

«Իմաստութեամբ շինի տունն եւ հանճարով կանգնի. եւ խորհրդով լնուն շտեմարանք ամենայն մեծութեամբ պատուականաւ եւ բարեօք» (Առակք ԻԴ. 3-4) ամէն:



**ՄԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 1-ն սեպտեմբերի

1969 փրկական ամի,

և ի տումարիս հայոց ՌԵԺԶ

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի

ՀՄՐ. 882